600.0134.15.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2020 թվականի №134Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի № 489Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 14-ի №365Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մարտի 6-ի №137-20 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №489Ա որոշման՝

1) 1-ին կետում «հավելվածների» բառից հետո լրացնել «՝ №№1-2 հավելվածներում նախատեսված ուղղություններով ներդրումների իրականացումը համարելով առաջնահերթ» բառերը.

2) 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սույն որոշման №1 և №2 հավելվածներով յուրաքանչյուր ծրագրային տարվա համար նախատեսված աշխատանքները մասնակի իրականացված լինելու պարագայում №4 հավելվածով նույն ծրագրային տարում նախատեսված

ներդրումների փաստացի իրականացված և շահագործման հանձնված ծավալները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 և №2 հավելվածներով՝ այդ ծրագրային տարվա համար նախատեսված և ամբողջությամբ իրականացված և շահագործման հանձնված աշխատանքների տոկոսային համամասնությամբ.».

3) 2-րդ կետի 6-րդ ենթակետում «1-ին կետի 1-ին ենթակետի «ա» ենթակետով (բացառությամբ №1 հավելվածի 6-րդ կետի) և «բ» ենթակետով»» բառերը փոխարինել «2-րդ կետի 1-ին կետի «ա» և «բ» պարբերություններով» բառերով.

4) №1, №2 և №4 հավելվածների 2020 թվականի հատվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №1, №2 և №4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
15 ապրիլի 2020 թ.